

# Շոգովուրդ

143  
(2623)

11 հոկտեմբերի երեքշաբթի 2022  
տպագրության ժԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է ՄԱՍ 109



Հոկտեմբերի 5-ին՝ խորհրդարանում կառավարություն-ԱԺ հարցու-պատասխանի ժամանակ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդես է եկել բազմաթիվ իրարամերժ հայտարարություններով և հայտնել նաեւ այնպիսի տեղեկություններ, որոնք իրականությանը չեն համապատասխանում: Օրինակ՝ այդ օրը նա շատ խոսեց ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի մասին: «Վարդան Օսկանյանն է եղել, որ հրապարակային Հայաստանի Հանրապետությանը ճանաչել է օկուպանտ»,- հայտարարեց Փաշինյանը: Այս պնդումը մանիպուլյատիվ է, քանի որ Փաշինյանն այն ներկայացրեց և Օսկանյանի ընդհանուր մտքի համատեքստից կտրված: Խոսքը 2001 թվականին Վարդան Օսկանյանի տված մի հարցազրույցի մասին է, որտեղ նա խոսում է Ղարաբաղյան հակամարտության եւ բանակցությունների մասին: Նախ՝ Օսկանյանը հայտարարում է. «Հայաստանը չի ստորագրի մի փաստաթուղթ, որտեղ ասվում է, որ Ղարաբաղը Ադրբեջանի մաս է կազմում»: Այսինքն՝ 2001 թվականին ԱԳ նախարարը բացառում էր որեւէ դեպքում Արցախի՝ Ադրբեջանի կազմում լինելը: Այնուհետեւ Օսկանյանը հայտարարում է, որ Ղարաբաղի հարցի՝ Հայաստանի համար ցանկալի լուծման դեպքում Ադրբեջանին կվերադարձվեն 7 շրջաններից 6-ը: «Գիտե՞ք, ինչքան էլ որ դա ցավոտ լինի, եթե այնտեղ (Ջանգելանի շրջանում,- խմբ.) բնակիչներ կան, եթե մենք ստանում ենք Ղարաբաղի՝ մեզ համար ցանկալի կարգավիճակը, բոլոր օկուպացված տարածքները, բացի Լաչինից, պետք է վերադարձվեն», - հայտարարում է Օսկանյանը: Այսինքն՝ ակնհայտ է, որ օկուպացված տարածքների մասին Օսկանյանի խոսքը վերաբերում է ոչ թե Ղարաբաղին ընդհանրապես, այլ նախկին ԼՂԻՄ-ի հարեւան 7 շրջաններին, որոնցից 6-ը հակամարտության լուծման դեպքում կվերադարձվեին Ադրբեջանին: Եվ Փաշինյանի պնդումը, թե քանի որ Օսկանյանը խոսել է Ադրբեջանի տարածքները օկուպացնելու մասին, ապա դրանով ճանաչել է Ղարաբաղը Ադրբեջանի կազմում, մանիպուլյատիվ է: Այսպիսով փաստենք, որ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Խորհրդավոր պայմաններում գլխավոր տնօրեն փոխած «USU Արմենիա» ՓԲԸ-ի՝ «Վիվա USU»-ը, ըստ «Սիվիլներ»-ի, վաճառքի է հանվել: Հիշեցնենք, որ այս տարվա հունիսի 22-ին «Վիվա USU»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Ֆիրիկյանը անակնկալ կերպով հեռացավ պաշտոնից, լուրեր կան՝ նաեւ Հայաստանից, եւ տնօրեն նշանակվեց ներսից Արմեն Ավետիսյանը: Այս հեռացումն իհարկե շատ հարցեր է առաջացրել, որոնց կանխարձանանք առաջիկայում, բայց երեկ «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց «USU Արմենիա» ընկերությունից պարզել, թե ինչու են վաճառում, որքան արժեն ընկերության բաժնետոմսերը, եւ ով է հավանական գնորդը, սակայն այդպես էլ պատասխան չտացանք: Խոստացան այսօր մանրամասնել: Մինչ այս փորձագիտական հանրային այս վաճառքի մասին տեղեկությունը համարում է որպես օդի մեջ եղած խոսակցություն այն պարզ պատճառով, որ իրականում վաճառքը, եթե նույնիսկ լինի, արհեստական մի գործընթաց է լինելու: Հիշեցնենք, որ «Վիվա USU»-ի բաժնետերը Կիպրոսում գրանցված Aramayo Investments Limited ընկերությունն է: Մյուս 80 տոկոսի (սեփականատերերի հայտարարագրի՝ ընկերության ավելի քան 42 տոկոսի) բաժնետերը ռուս միլիարդատեր Վլադիմիր Եվտուշենկովն է կոնսոլիդացրել գրանցված Allegato Holding SARL ընկերության միջոցով: Քանի որ Եվտուշենկովը հայտնվել է Մեծ Բրիտանիայի ու Ավստրալիայի պատժամիջոցների տակ, ինչպես նաեւ հեռացվել է Նյու Յորքի ֆոնդային բորսայի ցուցակից, ուստի փորձում է կեղծ վաճառքի միջոցով ազատվել պատժամիջոցներից: Ամեն դեպքում, մենք դեռ սպասելու ենք «Վիվա USU» ընկերության պարզաբանումներին:



Հոկտեմբերի 7-ին՝ արդարադատության նախկին նախարար Կարեն Անդրեասյանի՝ մի քանի ժամում ԲԴԻ նախագահ նշանակվելուց հետո, խորհրդում լարված խոսակցություններ են սկսվել անդամների միջեւ, որից 3 օր անց ազատման դիմում գրեց ԲԴԻ անդամ Գրիգոր Բեքմեյանը: «Ցավովք, վերջին մեկ շաբաթվա գործընթացները՝ ներառյալ այսօրը, ինձ համար հիմնովին ապացուցեցին, որ Բարձրագույն դատական խորհրդի անկախության մասին իմ եւ խորհրդի անդամների մեծամասնության պատկերացումները իրար չեն համապատասխանում: Վերլուծելով վերջին մի քանի ամսվա իրադարձությունները, նաեւ վերջին մեկ շաբաթվա գործընթացները՝ համոզվեցի, որ Բարձրագույն դատական խորհուրդը այլեւս այն խորհուրդը չէ, որը նախատեսված է Սահմանադրությամբ եւ Դատական օրենսգրքով», - գրեց Բարձրագույն դատական խորհրդից հեռացող Բեքմեյանը: Ակնհայտ է, որ Գրիգոր Բեքմեյանը իր հայտարարությամբ փաստեց, որ ԲԴԻ-ն անկախ մարմին չէ, եւ ինքը չի ցանկանում մաս դառնալ այն գործընթացների, որոնք սպասվում են դատական համակարգում: ԲԴԻ-ում այսքանով ազատումները չեն ավարտվելու: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԲԴԻ անդամներից, ամենայն հավանականությամբ, երկու հոգի եւս կզնան Բեքմեյանի ճանապարհով եւ ազատման դիմում կգրեն: Ստացվում է՝ ողջ խորհուրդը կդառնա իշխանական ՔԴ-ի կցորդը, այլ ոչ անկախ դատական համակարգի երաշխավորը:



Հայկական աղի արտադրությունը զգալի նվազել է, պաշտոնական տվյալներով՝ 40.2 տոկոսով: Պատճառը ներմուծման ծավալների ավելացումն է: Նշենք, որ աղ Հայաստան մտնում է հարեւան Իրանից եւ ավելի էժան է, քան տեղականը: Ըստ «Աղի կոմբինատ»-ի տվյալների՝ մեր հանրապետությունում մտնում է իրանական արտադրության տեխնիկական եւ արդյունաբերական աղ, որը իրացվում է որպես կերակրի աղ: Անգամ առեւտրի որոշ կետերում անարգել վաճառվում են հայկական աղի փաթեթավորման նման տուփով իրանական աղ՝ սրանով սպառողին մոլորեցնելով: «Աղի կոմբինատ»-ի գործադիր տնօրեն Արմեն Վասիլյանի խոսքով՝ ներկրված տեխնիկական աղն ամբողջովին օգտագործվում է հացի, երջիկի, ձկնեղենի պահածոների արտադրություններում: Նրա խոսքով՝ սահմանին ներկրվածի քիմիական բաղադրությունը չի ստուգվում եւ այն մաքսագրծվում է ծիծաղելի գներով: Բացի այս, պարկերի վրա սննդի մեջ չօգտագործելու վերաբերյալ գրառումները բացակայում են, մինչդեռ պետք է նշված լինի «արգելված է օգտագործել սննդի մեջ» պարտադիր գրությունը: Ընդգծենք, որ տեխնիկական աղը սննդի համար նախատեսված չէ: Այն օգտագործվում է ձյուն-սառույց հալեցնելու, գործարաններում՝ ջրի փափկեցման, գյուղատնտեսությունում՝ կենդանիների կերակրման համար: Ղա նույնն է, որ, օրինակ, մեքենայի մեջ լցվող յուղով ձվածեղ պատրաստեն:







ԻՐԱՎԱԿԱՆ

ՄԱՆ ԴՐԱՄ ԿԱԾԱՌՔ

ՊԵԿ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ՝ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԱԹՈՒԻՆ

ՊԵԿ դաշնային վերաբերյալ ցախագործարարների միջոցով հանցագործության արգելադրության հետևանքով...



Քաղաքացիական շենքում գեղջված գնով երկու բնակարանի գնման իրավունք տրամադրելու՝ իր ե. Յ. Ա. ի պահանջը...

Վավերացված պայմանագրերով նշված երկու բնակարանները հաշվառվել են հիշյալ անձանց անուններով...

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐՑԱՔՆԵՎՈՒՄ ԵՆ

ՀՀ անկախության տոնի օրը Շնաբլուրում գոհված զինծառայողների՝ ոստիկանության կողմից ուժի կիրառմամբ բերման...

Վաղ առավոտյան, երբ ծնողները Շոքաբլուրում էին եւ փորձում էին թույլ չտալ Փաշինյանի մուտքը, ոստիկանությունը, բիրտ ուժ կիրառելով ու մարմնական վնասվածքներ հասցնելով...

ԱԶԱՏ Է ԱՐՉԱԿԵԼ

Քիչ առաջ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Տիգրան Դավթյանը 15 միլիոն գրամի դիմաց ազատ է արձակել արտակարգ իրավիճակների նախկին նախարար Անդրանիկ Փիլոյանին...

Նախկին նախարար Անդրանիկ Փիլոյանի մեղադրանք է առաջադրվել, քրեական գործով եւս 8 անձ ունեն մեղադրյալի, իսկ ավելի քան 10 անձ կասկածյալի կարգավիճակ:

ՄԱՐԶ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳԱՏԱԽԱԶ



ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ զինվորական դատախազ դառնալու համար դիմում է ներկայացրել ԶԿ նախկին նախագահ Հայկ Գրիգորյանը: Ինչպես հայտնի է, Գլխավոր դատախազությունը զինվորական դատախազ է փնտրում եւ մրցույթ է հայտարարել, որը կկայանա հոկտեմբերի 21-ին...

ԱՆՈՐԴԱՆԻՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Քաջիկ Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի փետրվարի 23-ին Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթի ստավայրի դատական նիստերի թիվ 2 դահլիճում, դատավոր Վ. Մարգարյանի վարչությունում քննվող թիվ ԵԴ/0690/01/21 քրեական գործով տեղի ունեցած հերթական դատական նիստի ընթացքում, որպես ամբաստանյալ մասնակցելով դատաքննությանը, վիրավորել է տուժող Արմինե Մուրադյանին՝ ուշադրություն չդարձնելով նախագահող դատավորի կողմից լռելու հորդորներին՝ նման կերպ վիրավորելով դատավարության մասնակցող անձանց եւ անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի նկատմամբ, ինչի պատճառով դատարանը կիրառել է դատական սանկցիա եւ որոշել է ամբաստանյալ Քաջիկ Աբրահամյանին հեռացնել դահլիճից 10 ժամ տևողությամբ:

Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 7-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 124 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:









Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են համարվում էներգետիկայի, կառուցման, սրահայրի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր:

Նարեկ Խաչատրյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր են համարվում էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ եւ համապատասխան գծային ենթակառուցվածքների օբյեկտների կառուցման համար տրամադրված հողերը, որոնք, ըստ գործառնական նշանակության, դասակարգվում են՝

- 1) էներգետիկայի,
2) կապի,
3) տրանսպորտի,
4) կոմունալ ենթակառուցվածքների:

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի օգտագործման հատուկ պայմանները որոշվում են օրենքով սահմանված կարգով: Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կառուցման ու սպասարկման համար տրամադրվող կամ ձեռք բերվող հողամասերի չափերը որոշվում են հաստատված նորմերով կամ նախագծային, տեխնիկական փաստաթղթերով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՎՈՐԳ».

Բնակչության անվտանգության ապահովման, օբյեկտների շահագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակով քաղաքաշինական եւ հողաշինարարական փաստաթղթերով սահմանվում են գոտիներ, հողամասերի սահմանափակումների հատուկ իրավական ռեժիմ, այդ թվում՝ սերվիտուտներ: Այդ գոտիների սահմաններում սեփականատերերի հողամասերը չեն վերցվում բացառությամբ այն դեպքերի, երբ գոտու համար սահմանված ռեժիմով այդ հողամասերը լիովին հանվում են տնտեսական շրջանառությունից, ինչպես նաեւ օրենքներով սահմանված դեպքերում: Այդ գոտիներում հողամասերի վրա արգելվում է հատուկ իրավական ռեժիմին հակասող ցանկացած գործունեություն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անճարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո սրահայրվում է արդյո՞ք դրա կրկնօրինակը: Հայկուհի Վարդանյան (49 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով: Ընդ որում մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՎՈՐԳ».

Անձը անշարժ գույքի համաձայնագրեր կարող է դառնալ միայն տվյալ գույքի վերաբերյալ կնքված գործարքի արդյունում (բաժնեմասի նվիրատվություն կամ առուվաճառք), որից ծագող իրավունքներն էլ ենթակա են պետական գրանցման:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում



44-օրյա պատերազմի մասնակից, Յորի 1-ին մարտկոցի հրետանավոր Լեւոն Գրիգորյանի հիշատակին նվիրված հուշաղբյուր բացվեց: Լեւոնի հոր ձեռքով կառուցված հուշաղբյուրը կրելու է Լեւոնի անունը, բայց նվիրված է լինելու նաեւ Յորի Դ-20 հրետանային դիվիզիոնի ընկած բոլոր հերոսներին:

ԲԱԺՆՈՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայկուստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone number, and a checkbox for 'անվճար'.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22\*/3, հեռ՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 10.10.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: